



# Մ ՈՒՐՐԲ Յ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



### ՀՈԳԵԳԱՆՈՒՄՏԷՆ ԵՏԲ ՎԵՅԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

4 ՅՈՒՆԻՍ 2021

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (3.1-11)

**Ա**հա ահա սիրիկ, Երկնաւոր Զօրքերու ճէրը Հրէաստանն ու Երուսաղէմը պիտի գրկէ իրենց գօրութիւնը եղող նեցուկներէն, հացի եւ ջուրի ամբողջ պաշարէն: Այլ պիտի չունենան ո՛չ յաղթ կտորիճ ու պատերազմիկ, ո՛չ դատաւոր ու մարգարէ, ո՛չ գուշակ ու երէց, ո՛չ յիսնապետ ու հիանալի խորհրդատու, ո՛չ իմաստուն ճարտարապետ եւ ո՛չ ալ ճարպիկ կախարդ: Դեռահաս պատանիներ իշխան պիտի կարգեմ անոնց վրայ եւ քմահաճոյքը պիտի ըլլայ անոնց իշխանը: Մարդիկ իրարու պիտի իյնան, ընկերն իր ընկերը պիտի կեղեքէ. երիտասարդը արհամարհանքով պիտի ընդդիմախօսէ ծերին եւ գռեհիկը՝ ազնուականին: Այն ատեն ամէն մէկը իր եղբայրը կամ հօրը ընտանիքէն մէկ անդամը պիտի բռնէ եւ ըսէ. “Դուն պատմուճան ունիս, եկուր մեր իշխողը եղիր եւ մեր ուտելիքը դուն հայթայթէ”: Իսկ անիկա պիտի պատասխանէ. “Ես ձեզի օգտակար չեմ կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ ուտելիք ունիմ տունս, ո՛չ հագնելիք. այս ժողովուրդին իշխան չեմ ըլլար”:

Երուսաղէմը լքուեցաւ եւ Հրէաստանը կործանեցաւ, որովհետեւ իրենց բնակիչները անօրէնութիւն խօսեցան եւ Տիրոջ հակառակ գործեցին: Ուստի իրենց փառքը նսեմացաւ, իրենց երեսէն ամօթը վերցուեցաւ. Սողոմացիներուն

պէս իրենց մեղքերով պարծեցան, առանց ծածկելու: Վա՛յ իրենց. իրենք իրենց գլխուն չարիք բերին: Արդարին ըսէք՝ Թէ բարի է իր վերջը, որովհետեւ իր գործերուն պտուղը պիտի վայելէ: Բայց վա՛յ անօրէնին. չար պիտի ըլլայ անոր վերջը, որովհետեւ իր գործած չարիքները իրեն պիտի դառնան:

Արդարին ըսէ՛ք Թէ բարի է իր վերջը, որովհետեւ իր գործերուն պտուղը պիտի վայելէ:

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (11.13-24)

**Չ**եզի՛ հեթանոսներուդ կ'ըսեմ. հեթանոսներու առաքեալ ըլլալու իմ պաշտօնովս կը պարծենամ, մտածելով որ թերեւս այս ձեւով ազգակիցներուս նախանձը գրգռեմ եւ յաջողիմ անոնցմէ ոմանք փրկել: Որովհետեւ, եթէ Աստուած զանոնք մերժեց որպէսզի հեթանոս աշխարհը հաշտեցնէ իրեն հետ, կը նշանակէ թէ երբ վերստին ընդունի զանոնք՝ մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ:

Թէ Աստուած վերստին պիտի ընդունի զանոնք՝ յստակ է, որովհետեւ երբ բերքին երախայրիքը Աստուծոյ ընծայուած է, կը նշանակէ ամբողջը Աստուծոյ ընծայուած է. նոյնպէս, եթէ ծառին արմատները Աստուծոյ նուիրուած են, կը նշանակէ

Թէ ճիւղերն ալ Աստուծոյ նուիրուած են: Ընդդէմ է որ այդ ճիւղերէն ոմանք կտրուեցան, եւ դուն որ վայրի ճիթենի մըն էիր՝ անոնց տեղ պատուաստուեցար եւ այդ ճիթենիին արմատներէն եկող

... մի՛ մոռնար որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները քու վրայ:

հարուստ աւելչը ըմպեցիր: Բայց մի՛ պարծենար եւ մի՛ արհամարհեր կոտրած ճիւղերը. մի՛ մոռնար որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները

քու վրայ: Հիմա պիտի ըսես. «Աստուած այդ ճիւղերը կտրեց զի՛ս պատուաստելու համար»: Իրաւ է. անոնք՝ հրեաները կտրուեցան՝ որովհետեւ չհաւատացին, եւ դուն՝ հեթանոսը, հաւատալուդ համար արմատին վրայ հաստատուեցար. բայց մի՛ հպարտանար, այլ վախցի՛ր: Որովհետեւ եթէ Աստուած բուն ճիւղերուն չխնայեց, թերեւս քեզի երբեք չխնայէ:

Տե՛ս թէ նո՛րքան քարի է Աստուած եւ խիստ միաժամանակ: Տե՛ս թէ նո՛րքան քարի է Աստուած եւ խիստ միաժամանակ:

Տե՛ս թէ նո՛րքան քարի է Աստուած եւ խիստ միաժամանակ: Խիստ է հաւատքի մէջ կործանածներուն հանդէպ եւ բարի՛ քեզի հանդէպ, պայմանաւ որ շարունակես անոր բարութեան արժանի

մնալ. այլապէս դո՛ւն ալ պիտի կտրուիս: Նոյնպէս ալ, եթէ հրեաները թողուն իրենց անհաւատութիւնը, կրկին պիտի պատուաստուին արմատին վրայ, որովհետեւ Աստուած կրնայ զանոնք վերստին պատուաստել: Եթէ դուն, որ իսկականին մէջ վայրի ճիթենի մըն էիր, կտրուեցար եւ պատուաստուեցար ընտանի ճիթենիին վրայ որ քու բունդ չէր, ո՛րքան աւելի դիւրութեամբ պիտի

պատուաստուին նոյն այդ ճիթենիին բնական ճիւղերը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (14.13-21)

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատուածը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, գլխաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամայի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է. արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու»: Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ իրենք երթան:

Բոլորն ալ կերան ու կշտացան.

Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք ըսին Յիսուսի. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ»:

Յիսուս ըսաւ. «Հո՛ւս բերէք ատոնք»: Եւ հրամայեց որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան. եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

... ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած: